ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____N _____

Ձեր N _____

Ք. ԵՐԵՎԱՆ, ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑ 1/3, 4-ՐԴ ՀԱՐԿ
ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
ԷԼ. ՀԱՍՑԵ՝ FOI@FOI.AM

Հարգելի տիկին Դոյդոյան

Ձեր 2022 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 649389 հարցման կապակցությամբ հայտնում եմ.

1-3.2020 թվականի 44-օրյա պատերազմի մասնակիցները չեն հանդիսանում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող շահառուներ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N318-Ն որոշման 12-րդ հավելվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հայտարարված արտակարգ իրավիճակներում կամ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով: Տուժած անձինք են համարվում նաև 2020 թվականին 44-օրյա պատերազմի ընթացքում վիրավորում և/կամ վնասվածք ստացած անձինք: Տուժած անձն օգտվում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնությունից և սպասարկումից՝ վերոնշյալ որոշմամբ սահմանված ծավալներով, այդ թվում նաև նույն որոշման 5-րդ հավելվածով նախատեսված նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից: Տուժած անձը պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով առողջության առաջնային պահպանման ծառայություններ է ստանում իր կողմից կամավոր ընտրված բժշկի մոտ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 420-Ն որոշմամբ սահմանված կարգով գրանցումից հետո: Տուժած անձին տրամադրվող պետության

կողմից երաշխավորված անվճար պայմաններով ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնությունը և սպասարկումը ներառում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշմամբ սահմանված կարգով հատկացվող դեղերի տրամադրումը՝ Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերի մասով։

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՏԵՂԱԿԱԼ՝ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ Գայանե Ավագյան
ՀՀ ԱՆ ՊԱԳ
Հեռ. 060 80-80-02 (4036)